Հավելված Դ1.11 բ

Տնային Տնտեսություն

Գյուղատնտեսությամբ զբաղվելու վերաբերող

ՀԱՐՑԵՐ

ՀԱՐՑ Գ.1.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՄ Է ԱՐԴՅՈՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՕՐԻՆՎՈՂ ՀՈՂԵՐՈՒՄ (ՍԵՓԱԿԱՆ, ՆԵՐԱՌՅԱԼ ՏՆԱՄԵՐՁ, ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՝ ՎԱՐՁԱՎՃԱՐՈՎ ԿԱՄ ԱՌԱՆՑ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ) ԿԱՄ ԶԲԱՂՎՈՒՄ Է ԱՐԴՅՈՔ ԿԵՆԴԱՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՄԲ, ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ ԹԵ ԱՐՏԱԴՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՍԵՓԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ, ՎԱՃԱՌՔԻ, ԹԵ ԱՅԼՆԻ ՀԱՄԱՐ

<<Այո>> հուշումը գծանշվում է, եթե տվյալ տնային տնտեսությունը մշակում է ցանկացած տեսակի կամ տեսակների գյուղատնտեսական մշակաբույսեր տնտեսության կողմից տնօրինվող հողերում (սեփական, ներառյալ տնամերձ, վարձակալված կամ առանց վարձավճարի) կամ զբաղվում է կենդանաբուծությամբ (պահում է ցանկացած տեսակի կամ տեսակների գյուղատնտեսական կենդանիներ՝անկախ գլխաքանակից և սեռահասակային խմբից), անկախ նրանից արտադրված արտադրանքը նախատեսված է սեփական սպառման, վաճառքի թե ապրանքափոխանակման համար, ինչպես նաև, եթե տնային տնտեսությունն ունի գյուղատնտեսական նշանակության հողեր, որոնք չեն օգտագործվում ըստ գործառնական (նպատակային) նշանակության:

Հակառակ դեպքում գծանշվում է <<Ոչ>> պատասխանին համապատասխանող վանդակը:

ՀԱՐՑ Գ.2.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԸ (ԳԼՈՒԽ)

Տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը հարցը ներառում է տնային տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի վերաբերյալ տվյալները համապատասխան տողերով՝ ըստ անասնատեսակների:

<<Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող բոլոր տեսակի և սեռահասարակային խմբերի խոշոր եղջերավոր անասունների (կովեր, արտադրող ցուլեր, բանող եզներ , երինջներ, մոզիներ, հորթեր մինչև 1 տարեկան և այլն) գլխաքանակի հանրագումարը:

<<որից՝ կովեր>> տողով լրացվում է տնային տնտեսությանը պատկանող բոլոր կովերի գլխաքանակի հանրագումարը:

<<որից՝ գոմեշներ>> տողով լրացվում է տնային տնտեսությանը պատկանող բոլոր գոմեշների գլխաքանակի հանրագումարը:

<<Խոզեր>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող բոլոր սեռահասարակային խմբերի խոզերի գլխաքանակի հանրագումարը:

<<Ոչխարներ>> տողով լրացվում է տնային տնտեսությանը պատկանող բոլոր տեսակի և սեռահասակի ոչխարների գլխաքանակի հանրագումարը:

<<Այծեր>> տողով լրացվում է տնային տնտեսությանը պատկանող բոլոր տեսակի և սեռահասակի այծերի գլխաքանակի հանրագումարը:

<<Թռչուններ>> տողով լրացվում է բոլոր տեսակի և հասակի թռչունների (հավեր, հնդկահավեր, բադեր, սագեր, լորեր, ջայլամներ և այլ թռչնատեսակներ) գլխաքանակի հանրագումարը:

<<Մեղվաընտանիքներ՝ փեթակ>> տողով լրացվում է մեղվաընտանիքների փեթակների քանակը հատով:

ՀԱՐՑ Գ.3.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ (ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ ՄՇԱԿՎՈՒՄ ԵՆ ԹԵ ՈՉ) ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՎԱԾԸ

(Հեկտար՝0.00 ճշտությամբ) accuracy

<<Գյուղատնտեսական նշանակության հողեր>> տողում լրացվում են տնային տնտեսությանը պատկանող (ներառյալ վարձակալության տրված) ընդամենը գյուղատնտեսական նշանակության բոլոր հողերի չափերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար օգտագործվող հողերն են: Դրանց կազմի մեջ մտնում են վարելահողերը, մշտական մշակաբույսերի (բազմամյա տնկարկների) տակ գտնվող հողերը, խոտհարքները, արոտավայրերը:

Չափման միավորն անհրաժեշտ է նշել հեկտարներով (օրինակ՝500 քմ =0.05 հա, 600 քմ =0.06հա, ….)

<<Վարելահող>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող (ներառյալ վարձակալութան տրված) ընդամենը վարելահողի (վարելահողը գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքի համար (ներառյալ բազմամյա կերային մշակաբույսերի (խոտաբույսերի) ցանքերը և ցելերը) օգտագործվող հողատեսքն է) չափը: Այս տողը ներառում է նաև այն վարելահողը, որը տնային տնտեսության կողմից չի օգտագործվել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքի համար, սակայն դրանից հավաքվել է խոտ grass was collected (անասնակեր) կամ այնտեղ արածեցվել են գյուղատնտեսական կենդանիներ:

<<Բազմամյա տնկարկ>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող (ներառյալ վարձակալության տրված) ընդամենը բազմամյա տնկարկների (բազմամյա տնկարկները

դրանք պտղատու այգիների, հատապտղանոցների և խաղողանոցների տակ գտնվող հողերն են, անկախ նրանից թե դրանք նոր են հիմնված թե գտնվում են բերքատու հասակում, ինչպես նաև տնկարանների համար օգտագործվող հողերն են) տարածությունը:

<<Այդ թվում՝ Պտղատու այգի և հատապտղանոց>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող (ներառյալ վարձակալության տրված) ընդամենը պտղատու այգու և հատապտղանոցի տարածությունը:

<<Այդ թվում՝ Խաղողանոց>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող (ներառյալ վարձակալության տրված) ընդամենը խաղողանոցի տարածությունը:

<<Բնական Խոտհարք>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող (ներառյալ վարձակալության տրված) ընդամենը բնական խոտհարքի (խոտհարքի (խոտհարքները խոտհնձի համար օգտագործվող հողային տարածքներն են) տարածությանը:

<<Արոտավայր>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող (ներառյալ վարձակալության տրված) ընդամենը արոտավայրի (արոտավայրերը անասնի արածեցման համար պիտանի և խոտհարքների տակ չօգտագործվող բնական կամ ցանովի խոտերի տակ զբաղված հողերն են) տարածությունը:

<<Տնամերձ հող>> տողում լրացվում է տնային տնտեսությանը պատկանող տնամերձ հողի տարածությունը:

ՀԱՐՑ Գ.4.

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՄԲ, ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՄԲ (ԱԿՎԱԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ) ԶԲԱՂՎԵԼԸ

<<Այո>> նշվում է, եթե տվյալ տնային տնտեսությունը զբաղվում է ձկնորսությամբ, ձկնաբուծությամբ (ակվակուլտուրաների արտադրությամբ), բացառելով դեկորատիվ (ակվարիում) ձկնաբուծությունը:

Ոլորտը ներառում է առափնյա կամ ներքին քաղցրահամ ջրերում, բաց ծովերում ձկների, խեցեմորթերի (խեցգետին, ծովախեցգետին, օմար, մանր ծովախեցգետին (կրեվետկա), լանգուստ և կակղամորթերի կրիաների, այլ ծովամթերքի որսը ինչպես նաև ձկնաբուծությամբ, ձկների կլիմայավարժեցմամբ ու ձկնամելիորատիվ աշխատանքներով՝ նորածին մանրաձկներ, գորտեր, մանր ծովախեցգետինների, ջրիմուռների և ուրիշ ուտելի ծովաբույսերի growing բուծմամբ և արտադրությամբ զբաղվելը:

Հակառակ դեպքում գծանշվում է <<Ոչ>> պատասխանին համապատասխանող տողը: